

Տպագրված է ընդամենը 2 օրինակ

Օրինակ -1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի բանկերի միություն»

հասարակական կազմակերպության

2023 թվականի նոյեմբերի 6-ի

արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ

Նախագահ՝

_____ Դ. Ազատյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**

«06» սեպտեմբեր 2023թ.

Գրանցման համար

211.1711035790

Հարկ վճարողի հաշվառման համար

02516765

«06» սեպտեմբեր 2023թ.

ԳՐԱՆՑՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԻՎ

001.2 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

**ՀԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**

«05» դեկտեմբեր 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

_____/_____
ստորագրություն

անուն, ազգանուն

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Երևան – 2023թ.

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1.1 «Հայաստանի բանկերի միություն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային (շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող) կազմակերպության կարգավիճակ:
- 1.1.2 Կազմակերպությունն իրավաբանական անձ է, որը հանդիսանում է Հայաստանի բանկերի միության իրավահաջորդը:
- 1.1.3 Կազմակերպությունն ունի՝ ինքնուրույն հաշվեկշիռ, բանկերում ՀՀ դրամով և արտարժույթներով հաշիվներ, իր անվանումով կլոր կնիք (հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով), խորհրդանիշ, ինչպես նաև դրոշմակնիք և խորհրդանիշով ձևաթուղթ:
- 1.1.4 Կազմակերպությունը պատասխանատու չէ իր անդամների պարտավորությունների համար, իսկ անդամները՝ Կազմակերպության պարտավորությունների համար:
- 1.1.5 Կազմակերպության գտնվելու վայրը՝ ք. Երևան, 0009, Կորյունի 19ա շենք:
- 1.1.6 Կազմակերպության լրիվ անվանումը՝
- 1.1.7 Հայերեն՝ «Հայաստանի բանկերի միություն» հասարակական կազմակերպություն:
- 1.1.8 Ռուսերեն՝ «Союз банков Армении» общественная организация:
- 1.1.9 Անգլերեն՝ «Union of Banks of Armenia» non governmental organization:
- 1.1.10 Կազմակերպության անվանման հապավումն է՝
- 1.1.11 Հայերեն՝ «ՀԲՄ» ՀԿ:
- 1.1.12 Ռուսերեն՝ «СБА» ОО:
- 1.1.13 Անգլերեն՝ «UBA» NGO:

2. Գործունեության առարկան և նպատակները

- 2.1 Կազմակերպության նպատակները՝ օրենքով սահմանված կարգով.
- 2.1.1 Անդամ բանկերի իրավունքների և օրինական շահերի միասնական պաշտպանությունը՝ Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական և մասնավոր կազմակերպություններում, ինչպես նաև միջազգային և օտարերկրյա կազմակերպություններում:
- 2.1.2 Անդամ բանկերի գործունեությանն օրենսդրորեն խոչընդոտող խնդիրների վերհանումն ու դրանց լուծման (վերացման) ապահովումը:
- 2.1.3 Անդամ բանկերի բնականոն գործունեության և զարգացման ապահովումը:
- 2.2 Կազմակերպության գործունեության առարկան՝ օրենքով սահմանված կարգով.
- 2.2.1 ՀՀ բանկային օրենսդրությունում և բանկային գործունեությանն առնչվող օրենքներում ու այլ իրավական ակտերում իրավասու մարմինների կողմից կատարվող փոփոխությունների ու լրացումների, ինչպես նաև նոր մշակվող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ անդամ բանկերի հետ համատեղ ընդհանուր կարծիքի (առաջարկություններ և հիմնավորումներ, ձևակերպումներ և խմբագրումներ, նկատառումներ, դիտողություններ և այլն) ձևավորում, ներկայացում ու պաշտպանում (ՀՀ կենտրոնական բանկ, կառավարություն, ազգային ժողով և պետական այլ մարմիններ):

- 2.2.2 ՀՀ գործող բանկային օրենսդրության ուսումնասիրում և համապատասխան նյութերի պատրաստում, ինչպես նաև բանկային օրենսդրության կիրառման հետ կապված անդամ բանկերի կողմից բարձրացված խնդիրների վերաբերյալ ընդհանուր կարծիքի ձևավորում, ներկայացում ու պաշտպանում:
- 2.2.3 Բանկային գործի կարգավորման և զարգացման հարցերով միջազգային փորձի, բանկային գործունեությունը կանոնակարգող ստանդարտների, կիրառվող նոր մեթոդների ու տեխնոլոգիաների, կառավարման համակարգերի, առաջարկված ծառայությունների փաթեթի և շահերի պաշտպանվածության ուղղությամբ ուսումնասիրությունների կատարում ու համապատասխան նյութերի պատրաստում:
- 2.2.4 Միջազգային ֆինանսական համակարգերում կիրառվող առաջավոր տեխնոլոգիաներն ու մեթոդները, ինչպես նաև մատուցվող նոր ծառայություններն անդամ բանկերում ներդնելու վերաբերյալ նյութերի և առաջարկությունների պատրաստում, սեմինարների կազմակերպում:
- 2.2.5 Ֆինանսաբանկային կոնֆերանսների, սեմինարների, գիտաժողովների, քննարկումների և աշխատանքային հանդիպումների կազմակերպում՝ բանկային համակարգի խնդիրներին արդյունավետ լուծումներ տալու նպատակով:
- 2.2.6 ՀՀ բանկային համակարգի գործունեության արդյունքների վերաբերյալ վերլուծական և վիճակագրական նյութերի պատրաստում:
- 2.2.7 Անդամ բանկերի մատուցած ծառայությունները միջազգային չափանիշներին համապատասխանեցման, արտերկրյա միջբանկային կապերի հաստատման և ամրապնդման, ինչպես նաև այլ բանկային համակարգերի հետ ինտեգրման ուղղությամբ ծրագրերի մշակում և իրականացում:
- 2.2.8 Անդամ բանկերի կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև որակավորման ու մասնագիտական համապատասխանության ստուգման ուղղությամբ ծրագրերի մշակում և իրականացում:
- 2.2.9 ՀՀ բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացման, ինչպես նաև ՀՀ բանկային համակարգի նկատմամբ վստահության ամրապնդման և բարձրացման ուղղությամբ ծրագրերի մշակում և իրականացում:
- 2.2.10 Ֆինանսաբանկային ոլորտին առնչվող իրադարձությունների լուսաբանման ուղղությամբ ծրագրերի մշակում և իրականացում:
- 2.2.11 Սույն Կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան այլ ծրագրերի մշակում և իրականացում:

3. Կազմակերպության իրավունքները և պարտականությունները

- 3.1 Կազմակերպությունն իրավունք ունի՝
- 3.1.1 Իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ՝ որպես հայցվոր կամ պատասխանող:
- 3.1.2 Բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ ՀՀ դրամով և (կամ) արտարժույթով:
- 3.1.3 Ստեղծել այլ կազմակերպություն կամ լինել նրա մասնակից:
- 3.1.4 Ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ:

- 3.1.5 Օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում:
- 3.1.6 Համագործակցել այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև այդ կազմակերպությունների հետ ստեղծել կամ անդամակցել նրանց կողմից ստեղծված հասարակական կազմակերպությանը:
- 3.1.7 Իրականացնել օրենքով չարգելված այլ իրավունքներ:
- 3.2 Կազմակերպությունը պարտավոր է՝
 - 3.2.1 Վարել իր անդամների հաշվառման գրանցամատյան:
 - 3.2.2 Օրենքով նախատեսված դեպքում և կարգով ենթարկվել պարտադիր աուդիտի:
 - 3.2.3 Օրենքով սահմանված դեպքում և կարգով Պետական եկամուտների կոմիտեին տրամադրել կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր:
 - 3.2.4 Ապահովել անդամի կողմից սույն Կանոնադրությանը, Ժողովի, Խորհրդի, Նախագահի որոշումներին ծանոթանալու կամ դրանց կրկնօրինակները տրամադրելու պահանջը՝ ստացման պահից 5-օրյա ժամկետում: Ընդ որում, կրկնօրինակները տրամադրվում են թղթային կամ էլեկտրոնային եղանակով անվճար:
 - 3.2.5 Ապահովել Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունների հրապարակայնությունը:
 - 3.2.6 Կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:
4. Կազմակերպության անդամները, անդամակցումը և անդամության դադարումը
 - 4.1 Կազմակերպության անդամ կարող են լինել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը (այսուհետ՝ Բանկ), որոնք սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով և պայմաններով անդամակցում են Կազմակերպությանը:
 - 4.2 Անդամը Կազմակերպությանը վճարում է անդամակցության և ամսական վճարներ՝ Ժողովի կողմից սահմանված չափերով և/կամ համամասնությամբ:
 - 4.3 Անդամակազմության վճարը Բանկի կողմից վճարվում է անդամ դառնալու օրվան հաջորդող ամսվա ընթացքում, իսկ ամսական անդամավճարները, այդ թվում նաև անդամ դառնալու ամսվա համար, յուրաքանչյուր հաջորդ ամսվա մինչև 5-րդ աշխատանքային օրը ներառյալ:
 - 4.4 Անդամության դադարման պահից ամսական անդամավճարներ չեն վճարվում:
 - 4.5 Անդամակցության վճարը կամ ամսական անդամավճարները սահմանված չափով և ժամկետներում չվճարվելու դեպքում հաշվարկվում է տույժ՝ Ժողովի կողմից սահմանված չափով:
 - 4.6 Սույն Կանոնադրության 4.5 կետում նշված տույժը կարող է չհաշվարկվել, եթե անդամը մինչև վճարման ժամկետի լրանալը գրավոր դիմում է Նախագահին վճարումը առավելագույնը 60 օր ժամկետով հետաձգելու վերաբերյալ, և դիմումում մանրամասն նշված են այն հանգամանքները, որոնց պատճառով անհնարին են դառնում ժամանակին վճարումների կատարումը:

- 4.7 Կազմակերպության անդամ բանկերի վարչության նախագահները (գործադիր տնօրենները), որպես բանկերի լիազոր ներկայացուցիչներ, Ժողովներին և Խորհրդի նիստերին, ինչպես նաև Կազմակերպության կառավարման ու վերահսկող մարմինների ձևավորմանը մասնակցում են առանց լիազորագրերի, իսկ բանկերի մյուս ներկայացուցիչները՝ լիազորագրերով:
- 4.8 Անդամակցումը
- 4.8.1 Բանկը Կազմակերպությանն անդամակցելու համար ներկայացնում է դիմում՝ անհրաժեշտության դեպքում ներկայացնելով նաև այլ փաստաթղթեր և հիմնավորումներ:
- 4.8.2 Անդամակցության վերաբերյալ դիմումը ստանալու պահից մեկամսյա ժամկետում Ժողովը որոշում է կայացնում դիմումը բավարարելու կամ մերժելու մասին: Որոշման մասին դիմողը ծանուցվում է գրավոր ձևով որոշման կայացման պահից եռօրյա ժամկետում: Ժողովում դիմումի քննարկմանը կարող է մասնակցել նաև դիմող Բանկի խորհրդի նախագահը կամ վարչության նախագահը (գործադիր տնօրենը):
- 4.9 Անդամության դադարումը
- 4.9.1 Անդամությունը դադարում է՝
- դադարեցման վերաբերյալ ներկայացված դիմումի համաձայն՝ դիմումը ներկայացված պահից մեկամսյա ժամկետում,
 - անդամ բանկի մեկ այլ պահպանվող բանկի հետ միացման դեպքում՝ Կենտրոնական բանկի կողմից անդամ բանկի գործունեության դադարման վերաբերյալ բանկերի գրանցման մատյանում գրառում կատարելու պահից,
 - անդամ բանկի ինքնալուծարման դեպքում՝ լուծարման մասին բանկի ընդհանուր Ժողովի որոշումն ուժի մեջ մտնելու պահից,
 - անդամ բանկի գործունեության լիցենզիան ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու դեպքում՝ լիցենզիան ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու պահից,
 - անդամ բանկի սնանկության դեպքում՝ սնանկության մասին դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից:
- 4.9.2 Բանկը կարող է հեռացվել անդամությունից Ժողովի որոշմամբ, եթե անդամը՝
- հաճախակի խախտել է սույն Կանոնադրության դրույթները, կամ
 - չի կատարել Ժողովի և/կամ Խորհրդի որոշումներով իր վրա դրված պարտականությունները:
5. Կազմակերպության անդամների իրավունքները և պարտականությունները
- 5.1 Կազմակերպության անդամն (լիազոր ներկայացուցիչն) իրավունք ունի՝
- 5.1.1 Մասնակցել Ժողովներին, Խորհրդի նիստերին, աշխատանքային հանձնաժողովների և կոմիտեների նիստերին:
- 5.1.2 Սույն Կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտրելու ու ընտրվելու Կազմակերպության կառավարման կամ վերահսկող մարմիններում:
- 5.1.3 Օգտվել Կազմակերպության ծառայություններից վճարովի հիմունքներով:
- 5.1.4 Ծանոթանալու Ժողովի, Խորհրդի, Նախագահի, աշխատանքային հանձնաժողովների, կոմիտեների արձանագրություններին և ընդունած որոշումներին:

- 5.1.5 Վերադասության կարգով բողոքարկել կառավարման մարմինների որոշումները:
- 5.1.6 Կազմակերպությունից պահանջել տեղեկություններ, ստանալ փաստաթղթերի պատճեններ՝ սույն Կանոնադրության փոփոխությունների, Ժողովի և Խորհրդի, Նախագահի, աշխատանքային հանձնաժողովների և կոմիտեների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալ նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը (առկայության դեպքում), որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին:
- 5.1.7 Կազմակերպության գործունեության վերաբերյալ ընդհանուր Ժողովին, Խորհրդին և/կամ Նախագահին ներկայացնել առաջարկություններ և հարցապնդումներ:
- 5.1.8 Բանկի գործունեության ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի, Պետական եկամուտների կոմիտեի և այլ պետական մարմինների հետ խնդիրներ առաջանալու դեպքում, ինչպես նաև նրանց հետ հարաբերություններում իրավունքները և օրինական շահերը պաշտպանելու նպատակով օգտվել Կազմակերպության աջակցությունից:
- 5.1.9 Օգտվել Կազմակերպության տեղեկատվական և վերլուծական նյութերից, ստանալ խորհրդատվություն բանկային գործունեության հետ կապված հարցերի վերաբերյալ:
- 5.1.10 Իրականացնելու օրենքով կամ սույն Կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:
- 5.2 Կազմակերպության անդամը (լիազոր ներկայացուցիչը) պարտավոր է՝
- 5.2.1 Կատարել սույն Կանոնադրությամբ և Կազմակերպության այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջները և կառավարման մարմինների որոշումները:
- 5.2.2 Բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշումներով իր վրա դրված պարտականությունները:
- 5.2.3 Սահմանված ժամկետներին և չափերով կատարել անդամակցության և ամսական անդամավճարների վճարումները:
- 5.2.4 Ակտիվ մասնակցություն ունենալ Կազմակերպության կանոնադրական խնդիրների և նպատակների իրականացմանը, նպաստել հեղինակության բարձրացմանը:
- 5.2.5 Կանոնադրական խնդիրների և նպատակների իրականացման համար Կազմակերպությանը տրամադրել համապատասխան տեղեկատվություն:
- 5.2.6 Պահպանել բանկային էթիկայի կանոնները, աջակցել ՀՀ-ի բանկային համակարգի զարգացմանը, Կազմակերպության անդամների միջև համագործակցության ամրապնդմանը, ինչպես նաև աջակցել նրանց կողմից ստանձնած պարտավորությունների կատարմանը:
- 5.2.7 Իրականացնել օրենքով չարգելված այլ պարտականություններ:
6. Կազմակերպության գույքը, այդ թվում՝ դրամական միջոցները
- 6.1 Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք, և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:
- 6.2 Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը նրա անդամների միջև չի բաշխվում:
- 6.3 Կազմակերպության գույքը ձևավորվում է՝
- 6.3.1 Անդամների անդամակցության և ամսական անդամավճարներից:
- 6.3.2 Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցներից:

- 6.3.3 Կազմակերպության ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ կազմակերպությունից ստացված միջոցներից:
- 6.3.4 Նվիրաբերություններից, այդ թվում՝ դրամաշնորհներից:
- 6.3.5 Հանգանակություններից:
- 6.3.6 Վարձակալության հանձնած գույքի դիմաց ստացված միջոցներից:
- 6.3.7 Օրենքով չարգելված այլ միջոցներից:

7. Կազմակերպության կառավարման մարմինները

7.1 Կազմակերպության կառավարման մարմիններն են՝ Կազմակերպության անդամների ընդհանուր ժողովը, Խորհուրդը, Կազմակերպության նախագահը (Նախագահը) և Նախագահի տեղակալը:

8. Կազմակերպության անդամների ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ժողով)

- 8.1 Կազմակերպության անդամների հերթական ժողովները գումարվում են յուրաքանչյուր տարի՝ ոչ ուշ, քան ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում:
- 8.2 Ժողովում նախագահում է Նախագահը, նրա բացակայության դեպքում՝ Նախագահի տեղակալը: Նախագահի կամ նրա տեղակալի բացակայության, ինչպես նաև նրանց գործունեությանը, վարձատրության պայմաններին վերաբերող հարցերով նիստերը, որի ժամանակ նպատակահարմար է հարցը քննարկել վերջիններիս բացակայության պայմաններում, նիստերը ղեկավարում է նիստին ներկա տարիքով ավագ անդամը:
- 8.3 Ժողովն իրավազոր է, եթե գումարվել է օրենքին և սույն կանոնադրությանը համապատասխան, և Ժողովին մասնակցում է Կազմակերպության բոլոր անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:
- 8.4 Ժողովում Կազմակերպության յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:
- 8.5 Ժողովի օրակարգի, նրա աշխատանքի ժամանակի և վայրի մասին մասնակիցները ծանուցվում են պատվիրված նամակով կամ էլեկտրոնային եղանակով (այդ թվում նաև միջբանկային CBANet էլեկտրոնային ցանցի միջոցով) ոչ ուշ, քան Ժողովի անցկացման օրվանից հինգ օր առաջ՝ հավաստելով հասցեատիրոջ կողմից ծանուցումը ստանալու փաստը:
- 8.6 Արտահերթ ժողովը գումարվում է Կազմակերպության նախագահի, վերստուգող հանձնաժողովի կամ կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ:
- 8.7 Արտահերթ ժողովը գումարվում է սույն Կանոնադրության 8.6 կետում նշված նախաձեռնությունից ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում:
- 8.8 Արտահերթ ժողով գումարելու ժամանակի և վայրի մասին մասնակիցները ծանուցվում են ոչ ուշ, քան Ժողովի անցկացման օրվանից երեք օր առաջ:
- 8.9 Հերթական կամ արտահերթ ժողովը գումարվում է դրա մասնակիցների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ:
- 8.10 Ժողովի ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում կազմվում է Ժողովի արձանագրությունը, որը ստորագրում են Ժողովի նախագահողը (նիստը վարողը) և քարտուղարը:

8.11 Ժողովի արձանագրությունները և հաշվետվությունները պահպանվում են հինգ տարի ժամկետով;

9. Ժողովի իրավասությունը

9.1 Ժողովն իրավունք ունի կայացնելու Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերջնական լուծման վերաբերյալ որոշում:

9.2 Ժողովի իրավասությանն են պատկանում՝

9.2.1 Կազմակերպության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ:

9.2.2 Կազմակերպության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումների ընդունումը, բացառությամբ դատարանի վճռով լուծարման դեպքերի:

9.2.3 Ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը:

9.2.4 Կազմակերպության կառուցվածքի հաստատումը:

9.2.5 Վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:

9.2.6 Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի ընտրությունը և վճարման չափի հաստատումը եթե օրենքի համաձայն Կազմակերպությունն ենթակա է պարտադիր աուդիտի:

9.2.7 Այլ իրավաբանական անձի ստեղծումը, այլ կազմակերպություններում Կազմակերպության մասնակցության մասին որոշումների ընդունումը:

9.2.8 Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվության հաստատումը: Ընդ որում՝ վերջինս հաստատվում է միայն վերաստուգող հանձնաժողովի եզրակացության առկայության դեպքում:

9.2.9 Իրավական ակտերի պահանջներին և սույն Կանոնադրությանը հակասող կառավարման մարմինների որոշումների գործողությունը դադարեցնելու մասին որոշումների ընդունումը:

9.2.10 Խորհրդի ձևավորումը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, Խորհրդի կանոնակարգի հաստատումը:

9.2.11 Կազմակերպությանն անդամակցության և անդամության դադարեցման վերաբերյալ որոշումների ընդունումը:

9.2.12 Կազմակերպությանն անդամակցության և ամսական անդամավճարների չափերի սահմանումը:

9.2.13 Նախագահի նշանակման, նրա վարձատրության կարգի և պայմանների և լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ որոշումների ընդունումը:

9.2.14 Նախագահի ներկայացմամբ նախագահի տեղակալի նշանակման, նրա վարձատրության կարգի և պայմանների և լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ որոշումների ընդունումը:

9.2.15 Օրենքով կամ կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

Ժողովի կողմից 9.2.1, 9.2.2, 9.2.3 և 9.2.9 ենթակետերում նշված հարցերով որոշումներն ընդունվում են Ժողովին մասնակցող Կազմակերպության անդամների ձայների $\frac{3}{4}$ -ով, իսկ մյուս ենթակետերով՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

10. Կազմակերպության խորհուրդը

- 10.1 Խորհուրդն ընտրվում է ընդհանուր Ժողովի կողմից 10(տասը) տարի ժամկետով, որի անդամներ կարող են լինել, Կազմակերպության անդամ բանկերի վարչության նախագահները (գործադիր տնօրենները) և Կազմակերպության նախագահը: Խորհուրդն իրավագոր է, եթե գումարվել է սույն Կանոնադրությանը համապատասխան, և նիստին մասնակցում է Խորհրդի բոլոր անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:
- 10.2 Խորհրդում յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:
- 10.3 Խորհրդի նիստի օրակարգի, նրա աշխատանքի ժամանակի և վայրի մասին մասնակիցները ծանուցվում են պատվիրված նամակով կամ էլեկտրոնային եղանակով (այդ թվում նաև միջբանկային CBANet էլեկտրոնային ցանցի միջոցով) ոչ ուշ, քան Խորհրդի նիստի անցկացման օրվանից երկու օր առաջ՝ հավաստելով հասցեատիրոջ կողմից ծանուցումը ստանալու փաստը:
- 10.4 Խորհրդի նիստը գումարվում է դրա մասնակիցների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ:
- 10.5 Խորհրդի նիստում նախագահում է Կազմակերպության Նախագահը, նրա բացակայության դեպքում՝ Նախագահի տեղակալը:
- 10.6 Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում Խորհրդի նիստեր կարող են գումարվել՝ Նախագահի, խորհրդի առնվազն երեք անդամի կամ վերստուգող հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով և ժակետում:
- 10.7 Խորհրդի նիստի ավարտից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում կազմվում է նիստի արձանագրությունը, որը ստորագրում են խորհրդի նախագահողը (նիստը վարողը) և քարտուղարը:
- 10.8 Խորհրդի նիստերի արձանագրությունները պահպանվում են հինգ տարի ժամկետով:

11. Խորհրդի իրավասությունը

Խորհրդի իրավասությանն են պատկանում՝

- 11.1 Կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների սահմանումը, ռազմավարության հաստատումը:
- 11.2 Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին որոշումների ընդունումը:
- 11.3 Կազմակերպության և նրա առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների տարեկան բյուջեների հաստատումը, որի նիստը գումարվում է յուրաքանչյուր տարի՝ ոչ ուշ, քան ֆինանսական տարվա ավարտից հետո երկու ամսվա ընթացքում: Տարեկան բյուջեն չհաստատվելու դեպքում գործում է նախորդ (առկա) տարվա տարեկան բյուջեն:
- 11.4 Կազմակերպության և նրա առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների նախորդ տարվա գործունեության արդյունքների հաստատումը:

- 11.5 Գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների (գործարքի կատարման պահին գործարքի գումարը Կազմակերպության ակտիվների 25 (քսանհինգ) տոկոսը գերազանցելու դեպքում) հավանություն տալը:
- 11.6 Խորհրդի իրավասությանն են պատկանում նաև ժողովի բացառիկ իրավասությունը չհանդիսացող և Նախագահի իրավասությանը չվերապահված հարցերը:

12. Կազմակերպության նախագահը և նրա իրավասությունը

- 12.1 Նախագահն ընտրվում է սույն կանոնադրությամբ սահմանված կարգով՝ 3 տարի ժամկետով: Նախագահ կարող է ընտրվել այն անձը, ով համապատասխանում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկի Վարչության նախագահին (Գործադիր տնօրենին) ներկայացվող պահանջներին:
- 12.2 Նախագահը՝
- 12.2.1 Նախագահում է Կազմակերպության ժողովները, խորհրդի նիստերը,
- 12.2.2 Ապահովում է ժողովի որոշումների կատարումը,
- 12.2.3 Կազմակերպում է Կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների մշակումը:
- 12.2.4 Ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում, միջազգային կազմակերպություններում և օտարերկրյա պետություններում:
- 12.2.5 Ներկայացնում է Կազմակերպության անդամների շահերը ՀՀ օրենսդիր և գործադիր մարմիններում, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկում, տեղական և միջազգային կառույցներում, հանդես է գալիս բանկային գործունեության կարգավորումն ու զարգացումը, ինչպես նաև անդամների շահերի պաշտպանությունը ապահովող առաջարկություններով և հայտարարություններով:
- 12.2.6 Որոշում է անդամակցել ֆինանսաբանկային ոլորտի միջազգային կազմակերպություններին, կրթական ծրագրերին, ասոցիացիաներին և նմանատիպ կառույցներին: Եթե այդպիսի անդամակցությունը ենթադրում է անդամավճարներ, որի չափը գերազանցում է ժողովի կողմից տարեկան բյուջեով հաստատված չափը, ապա համապատասխան ֆինանսավորումն ապահովելու համար դիմում է ժողովին կամ Խորհրդին:
- 12.2.7 Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի:
- 12.2.8 Տնօրինում և կառավարում է Կազմակերպության ցանկացած տեսակի և չափի գույքը (խոշոր գործարքների դեպքում՝ ժողովի հավանության առկայության պարագայում), այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով:
- 12.2.9 Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:
- 12.2.10 Հաստատում է Կազմակերպության և նրա առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների Աշխատանքային կանոնակարգերը, հաստիքների անվանումները, ինչպես նաև ժողովի կողմից հաստատված տարեկան բյուջեի սահմաններում հաստիքացուցակները ու դրանց դրույքաչափերը, վարձատրության պայմանները:

- 12.2.11 Հաստատում է Կազմակերպության և նրա առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների եկամուտների ու ծախսերի նախահաշիվները և դրանց կատարողականները:
- 12.2.12 Կայացնում է Կազմակերպության, ինչպես նաև նրա առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների աշխատակիցներին, այդ թվում ղեկավարներին աշխատանքի ընդունման և աշխատանքից ազատման մասին անհատական իրավական ակտեր:
- 12.2.13 Կազմակերպության և նրա առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:
- 12.2.14 Կազմակերպության կազմում ընդունելու և կազմից անդամին հեռացնելու մասին դիմումների և առաջարկությունների վերաբերյալ ժողովին տրամադրում է համապատասխան առաջարկություններ:
- 12.2.15 Հաստատում է ժողովի գումարմանը նախորդող տարվա Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք տարին մեկ անգամ ներկայացնում է ժողովի հաստատմանը:
- 12.2.16 Իրականացնում է ժողովի և խորհրդի կողմից տրված այլ լիազորություններ:

13. Նախագահի տեղակալը և նրա իրավասությունը

- 13.1 Նախագահի տեղակալը Կազմակերպությունն առանց լիազորագրի ներկայացնելու իրավասություն ունեցող ղեկավար մարմին է, ով ղեկավարում է Կազմակերպության ընթացիկ գործունեությունը:
- 13.2 Նախագահի տեղակալը՝
- 13.2.1 Կազմակերպում է ժողովի և Խորհրդի արձանագրությունների վարումը, իր լիազորությունների շրջանակում ապահովում է ժողովի և Նախագահի որոշումների կատարումը:
- 13.2.2 Նախագահի հաստատմանն է ներկայացնում Կազմակերպության և նրա առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների Աշխատանքային կանոնակարգերը, հաստիքացուցակները ու դրանց դրույքաչափերը, վարձատրության պայմանները: Նախագահի հետ համաձայնեցնում և ժողովի հաստատմանն է ներկայացնում տարածքային ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունները և կառուցվածքները:
- 13.2.3 Նախագահի կայացրած անհատական իրավական ակտերի հիման վրա կնքում, փոփոխում և լուծում է աշխատանքային պայմանագրեր:
- 13.2.4 Բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ:
- 13.2.5 Իր լիազորություններն իրականացնելիս Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի, կնքում է պայմանագրեր կազմակերպությանը ծառայություններ մատուցող անձանց և այլ մատակարարների հետ:
- 13.2.6 Ապահովում է Աշխատանքային կանոնակարգերի կատարումը:

- 13.2.7 Խորհրդի կամ Նախագահի հանձնարարականով ձևավորում է բանկերի համապատասխան աշխատակիցներից աշխատանքային խմբեր, կոմիտեներ Կազմակերպության ծրագրերի և նախագծերի մշակմանը մասնակցության համար:
- 13.2.8 Հաստատում է աշխատակիցների ֆունկցիոնալ պարտականությունները:
- 13.2.9 Հաստատում է Կազմակերպության և նրա առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերը (կարգեր, ընթացակարգեր, կանոններ և այլն):
- 13.2.10 Հաստատում է Կազմակերպության և նրա առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ներքին հաշվետվությունները:
- 13.2.11 Իրականացնում է օրենքով, Ժողովի և Նախագահի կողմից իրեն վերապահված այլ իրավասություններ:
- 13.2.12 Իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն Կանոնադրությամբ, Ժողովի, Խորհրդի և Նախագահի որոշումներով, ինչպես նաև Կազմակերպության և նրա առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների Աշխատանքային կանոնակարգերով:
- Կազմակերպության ներքին կառուցվածքային ստորաբաժանումների և նրա առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների ղեկավարները գլխավորում են համապատասխան աշխատանքների հիմնական ուղղությունները և իրենց գործունեությունն իրականացնում են ֆունկցիոնալ պարտականություններին համապատասխան:

14. Կազմակերպության վերստուգող հանձնաժողովը

- 14.1 Վերստուգող հանձնաժողովը կազմված է 3 անդամից, որոնք ընտրվում են տարեկան ընդհանուր ժողովում Կազմակերպության անդամների աշխատակիցներից, բացառությամբ կառավարման մարմիններում ընդգրկված անձանցից՝ 3 տարի ժամկետով:
- 14.2 Հանձնաժողովի նախագահն ընտրվում է հանձնաժողովի կազմից՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
- 14.3 Հանձնաժողովի նիստերը գումարվում են անհրաժեշտության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ: Հանձնաժողովն իրավասու է ընդունել որոշումներ, եթե նիստին մասնակցում են բոլոր անդամները:
- 14.4 Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:
- 14.5 Հանձնաժողովը ստուգումներն իրականացնելիս առաջնորդվում է ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով, սույն Կանոնադրությամբ, ինչպես նաև Ժողովի և Խորհրդի որոշումներով:
- 14.6 Հանձնաժողովի անդամները չեն վարձատրվում:

15. Վերստուգող հանձնաժողովի իրավունքները և պարտականությունները

15.1 Հանձնաժողովն իրավունք ունի՝

- 15.1.1 Տարին մեկ ստուգելու Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեությունը:
- 15.1.2 Ծանոթանալու գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին, ինչպես նաև պահանջելու դրանց հետ կապված բացատրություններ:

- 15.1.3 Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումից հետո հնգօրյա ժամկետում պարտադիր քննարկման ենթակա առաջարկություններ ներկայացնելու նրա մարմիններին:
- 15.1.4 Պահանջելու և ստանալու գործունեության վերաբերյալ տեղեկություններ:
- 15.1.5 Պահանջ ներկայացնել արտահերթ Ժողով գումարելու վերաբերյալ:
- 15.1.6 Իրականացնելու Ժողովի որոշմամբ նախատեսված այլ իրավունքներ:
- 15.2 Հանձնաժողովը պարտավոր է՝
- 15.2.1 Ստուգել տարեկան ֆինանսատնտեսական գործունեությունը հաշվետու տարվան հաջորդող տարվա չորս ամիսների ընթացքում,
- 15.2.2 Ստուգել ֆինանսատնտեսական գործունեությունը Ժողովի, Խորհրդի կամ Նախագահի, ինչպես նաև Կազմակերպության անդամների առնվազն 10 տոկոսի պահանջով, ոչ ուշ, քան պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող ամսվա մինչև 15-ը:
- 15.2.3 Ստուգել գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենքներին, այլ իրավական ակտերին, սույն Կանոնադրությանը, Ժողովի, Խորհրդի և Նախագահի որոշումներին, ինչպես նաև ներքին նորմատիվ իրավական ակտերի պահանջներին:
- 15.2.4 Պատրաստել ստուգման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն, այդ թվում՝ Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվության վերաբերյալ եզրակացությունը:
- Հանձնաժողովը ստուգման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնում է Նախագահին, իսկ Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվության վերաբերյալ եզրակացությունը՝ Ժողովին:

16. Կազմակերպության լուծարումը

- 16.1 Կազմակերպության լուծարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 16.2 Ժողովը կազմավորում (նշանակում) է լուծարման հանձնաժողով (լուծարող) և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Կազմակերպությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
- 16.3 Կազմակերպությունը կարող է լուծարվել՝
- 16.3.1 Ժողովի որոշմամբ (ինքնալուծարում),
- 16.3.2 Սնանկության հիմքով,
- 16.3.3 «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքում (հարկադիր լուծարում) և կարգով:

Կազմված է՝ 25.06.2025թ.

Տպագրված է ընդամենը 2 օրինակ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Օրինակ - 1

«Հայաստանի բանկերի միություն»

ԳՐԱՆՑՎԱԾ Է

հասարակական կազմակերպության

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

2025 թվականի հունիսի 25-ի

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**

ՀԲՄ արտահերթ ընդհանուր ժողովի
որոշմամբ

06.09.2018թ.

ՀԲՄ Նախագահ՝

Գրանցման համար

211.171.1035790

Դ. Ազատյան

Հարկ վճարողի հաշվառման համար

02516765

05.12.2023թ-ին գրանցված կանոնադրության
թիվ 001-3 փոփոխությունը գրանցված է
Իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից 16.07.2025թ.

աշխատակից

ստորագրություն

անուն, ազգանուն

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ**

1. «Հայաստանի բանկերի միություն» ՀԿ կանոնադրության 9.2.15 կետից հետո ավելացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն կանոնադրության 9.2.1, 9.2.2, 9.2.4., 9.2.7 և 9.2.9 ենթակետերում նշված հարցերով որոշումների կայացումը հանդիսանում է ժողովի բացառիկ իրավասությունը և չի կարող փոխանցվել կառավարման այլ մարմնի լուծմանը»:
2. Կանոնադրության մյուս կետերը մնում են անփոփոխ:

3. Սույն փոփոխությունը հանդիսանում է 05.12.2023թ-ին գրանցված «Հայաստանի բանկերի միություն» ՀԿ կանոնադրության անբաժանելի մասը: